



ՄԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36 ՐԻ ՏԱՐԻ

ՄԱՐԱԹ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3904

ՄԱՐԱԹԱԹԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 Փր. րանք: Բաժանորդագրները դրկելու է առ մատակարարութիւն Արեւելքի եւ Ռասիի, Կ. Պոլիս, Ղալամիա, Նորատուփեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Տեսութիւն. Հայ եկեղեցականութիւն, Առաջ. Աշուտ եւ ձաք. (ՎԱՀԱՆ Վ. ՊԱՐՏԻՉԱՅԻ):

Ձեռնարկագրութիւն ի կողմէս. (ՍՐԱՉԵԱՅ):

Տեղական արհեստագործութիւն. (ՅԱԿՈԲ Պ. ԿԵՎ. ՐԵԿԵԱՆ ՄԻՆԱՍ Յ. Յ.):

Մարդկային բարքառ եւ լեզու. Շախմատի բան. (Խ. ՈՒՂԱՌԻԿԵԱՆ):

Անժէ. Գեղոյն. (Վ. ԵՐԶ): (Թարգմ. Պ. ԹԵՂԼԱՆ):

Քաղաքացի Շարժական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԱԹ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԱՂԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Քանիցս առիթ ունեցած ենք, այս սինակաց մէջ իսկ, մեր դիտողութիւններն եւ տրտունջները պարզելու ընդդէմ Հայ եկեղեցականութեան ինչ ինչ թերութեանց, Գաւառական պաշտօններէ հրաժարումն եւ Վասիլորի եղբայր համար ցոյց տրուած նախասիրութիւնը թուրքոյ Հայ եկեղեցականաց դէմ գանդատանաց մշտատեւ պատճառ մ'է եւ պիտի մնայ, մինչդեռ անդին կարօտեալ վայրեր կան, դործունէութեան ընդարձակ ասպարէշներ, յորս լիովին կրնան ի գործ դնել իրենց պարտականութիւններն հանդէպ եկեղեցւոյն եւ Ազգին, եւ արժանի յաջորդներն հանդիսանալ Հայ եկեղեցականութեան պատմութեան այն մեծ գէւքերուն որք ամեն զոհողութիւն եւ անձնուրացութիւն յանձնաւորով, իրենց կեանքը նուիրած են ի պահպանութիւն եւ ի պաշտպանութիւն Հայ եկեղեցւոյն:

Այս անգամ գանդատ չէ որ պիտի ընենք իրենց, այլ հանրային գոհունակութեան հաւաստիք մ'է զոր կ'ուզենք տալ: Հայ եկեղեցականութեան Պատրիարքական հրաժարման արդի տագնապալի վիճակին մէջ, ազգային իշխանութեան ներկայ անկերպարան կացութեան մէջ, Հայ եկեղեցականութեան օրինական սահմանի մէջ ցոյց տուած միասիրտ եւ միահաղոյն փութաշնորհութիւնն, ազգային շահուց պաշտպանութեան համար ի յայտ բերած նախանձախնդրութիւնը կ'ուրախացնեն զմեզ եւ հրճուանք կը ընուն Ազգին սիրտն: Հայ եկեղեցականութեան պատմական ոգին է որ ցոյց տուին այս պարագայիս մէջ: Արդարեւ, մեր պատմութեան ամեն էջերուն մէջ, բերկրառիթ թէ տխրաման, կը գտնենք միշտ Հայ եկեղեցականութիւնն զօրավիգ եղած Ազգին եւ իւր պահպան հրեշտակի հովանին տարածած նորա վրայ: Մեր մէջ, Հայ եկեղեցւոյն միշտ մարմնաւորուած է ազգային պատմութեան հետ, եւ ասոր շնորհիւ մենք կրցանք պահել մեր հարց կրօնքն եւ լեզուն, ամենէն դառնաղետ եւ ամենէն աղետալի փորձութեանց մէջ անգամ:

Ներկայ փախուկ եւ անիշխանական վիճակին մէջ Հայ եկեղեցականութեան ի հանդէս բերած ոգին եւ ընթացքը մեզ ցոյց կուտան թէ Հայ եկեղեցականութիւնը չէ անշափ անկեալ որչափ կ'ենթադրուի եւ թէ նա կը պահէ տակաւին իւր նախնեացմէ աւանդեալ բարեմասնութիւններն, եւ այս բան ջերմ ուրախութեան առիթ մ'է մեզ համար: Իրաւ է թէ մեր ուրախութիւնն անխառն չէ եւ տխուր երեւոյթներ մերթ կուգան պղտորել զայն: Կը գտնուին դեռ եկեղեցականներ որք ո'չ միայն անտարբերութեամբ կը դիտեն ազգին ցաւերն, այլ մինչեւ իսկ յայտ յանդիման վնասակար ընթացք մը կը բռնեն ազգային շահուց դէմ, իրենց կոյր փառամոլութեան կամ դձուձ վրիժառութեան յագուրդ տալու համար՝ տոնակիս ընելով ամեն արժանապատուութիւն եւ ազնիւ զգացում:

Թողլով որ այսպիսի անարժան եկեղեցականք իրենց դատապարտութիւնը կրեն, մենք ներկայ յոգուածով պարտ անձին կը համարենք հը-

րապարակաւ մեր գոհունակութիւնն յայտնել Հայ եկեղեցականութեան եւ կը մաղթենք որ շարունակէ իւր այս ազգային եւ օրինաւոր ընթացքին մէջ, վստահ լինելով թէ ազգին սէրն եւ համակրանքն իրեն հետ է միշտ:

Ա. Ռ. Ա. Կ

ԱԳՈՍԻ ԵՒ ՉԱԳՔ

Իւր ձագերուն սեւուն Ագուաւ Երկարօրէն ճառ խօսեցաւ. « Զագերս, երբ դուք տեսնէք մարդ մի, որ ի դեռին կը խանայրէ, Նշան է քար առնու, եւ ըզձեզ զարնելու. Թեւ առէք. Շուտ փախէք »:

— « Բայց ի՞նչ ընենք, մայրիկ սիրուն, երբ այդ մարդն յառաջագոյն Քար ի ձեռին գաղտ ունենայ, Մեզ այդ խրատէդ ա'լ ի՞նչ շահ կ'այ »:

— « Հիմա ձագերս, ես արդարեւ Հասկացայ որ այսուհետեւ՝ Դուք այդ խելքով մէջ այս երկրի կեանք անվտանգ փորէք պիտի »: ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՉԱՅԻ

Ս. Սահակայ եւ Մեսրոպայ մրցանակաւ վարձատրեալ

ՈՒՆԻԱ. ԿԱՄ ԶԷՅԹՈՒՆ

Գրեց՝ Յ. Յ. ԱՂԱՀԱԿԵՐՏԵԱՆ

Կիլիկիոյ Զէյթուն լեռնային աւանին տեղական, կենսական, բանասիրական եւ լեզուաբանական սոյն նկարագիրն մինչև 1888 յունուար 1 որոշեալ ժամանակաւ պիտի վաճառի 10 դահեկանի, իսկ յայնմ հետէ տակաւ թիւ օրինակաց պատճառաւ գներն պիտի բարձրանան 15 եւ 20 դահեկանաց, որոշեալ մատնաւոր կնքով:

Կը վաճառի առ այժմ գրավաճառաց, Պահճէ գաբու ջրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղայից եւ հեղինակին քով շուկայ վարագծի խան:

ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ԿՈՎԿԱՍ

ԹԻՖԼԻՍ, 15 Նոյեմբեր

1872 թն Աղեքսանդր կայսեր հրամանով ամբողջ Ռուսիա ենթարկուեցաւ զինուորագրութեան բացի Ասիական Նոյն այդ 1872 թուականին սկսած էր, որ Արմի, Բէսարաբիայի եւ հիւսիսային Ասիական հայերն եւս ենթարկուեցան զինուորագրութեան, ինչպէս եւ Արմի Պաթարները՝ որոնցից կառավարութիւնն առանձին հեծեալագոր կազմեց իւր առանձին գրտակով, իւր առանձին վարչութեամբ եւ զինուորական ծառայութեան համար էլ՝ որոշուած ժամանակով (քրիստոնեայների համար՝ այդ ժամանակը հինգ տարի է, իսկ թաթարների համար երեք տարի)։ Առաւելարութիւնը մի քանի անգամ փորձեց Ասիական էլ ենթարկել զինուորական ծառայութեան, բայց այդ նրան չաջողուեց եւ իւրաքանչիւր անգամ այդ նպատակով փորձ անելու, բռնու ընդդիմութիւնների եւ խառնակութիւնների հանդիպեց ինչպէս մահմետականների, նոյնպէս եւ ոչ-մահմետականների կողմից։ Սակայն անկարելի էր, որ Ասիական միւս այդպէս ազատ մնար զինուորական ծառայութիւնից եւ միշտ օտար զինուորներ պարտաւորուած լինէին վտանգի ժամանակ երկիրը պաշտպանելու թշնամիներէն։ Բնական օրէնք, անձնապաշտպանութեան վեհ գաղափարն արդէն տրամադրում էր, որ երկիրը ինքն պաշտպանէր իրեն՝ թշնամիներից։ Եւ ահա կառավարութիւնն անցեալ տարի որոշեց եւ կանոններ հրատարակեց Ասիական (հիւսիս եւ հարաւ) ենթարկել զինուորագրութեան ընդհանուր պարտաւորութեան։ Այսան ամեն կողմերումն էլ պատրաստութիւններ տեսնել, ժողովուրդի տրամադրութիւնը լարել գէպի այդ օրէնքը, նրան միտքը խաղաղացնել եւ նրան վերջնականապէս համոզել այդ կարգադրութեան անխուսափելիութեան մասին։ Սակայն կառավարութիւնը տեսաւ, որ երկիրը դեռ այն դրութեան մէջ չէ, որ կարելի լինէր նրա հետ անել այն՝ ինչ որ պահանջում էր արդարութիւնը...։ Եւ ահա սկսան շարժուել Օսերը եւ լեռնային միւս ազգերը, գործը մինչեւ իսկ արիւնհեղութեան հասաւ, սկսան շարժուել եւ Անդրկովկասեան թուրքերը, մեծ խլրտումն ընկաւ նրանց մէջ՝ որոնց պարագլուխ նրանց հոգեւորականներն էին։ Կառավարութեան ոչ մի կարգադրութիւնը չ'օգնեց, չ'օգնեց նոյն իսկ մահմետականների կրօնապետի ճանապարհորդութիւնը եւ քարոզները, — ամեն ինչ ի դուր էր...։ Եւ կառավարութիւնն ստիպուեց ուրիշ կերպով վարուիլ։ Նա շտապեց իսկոյն կարգադրելու, որ հիւսիսային Ասիական եւ բուն Ասիական մահմետականներ ազատ լինին զինուորական ծառայութիւնից եւ դրա փոխարէն միայն որոշեալ տուրք տան։ Այդ նոր կարգադրութիւնը բաւական հանդարտեցնեց ինչ կերպով ներգործեց մահմետականների վերջայ եւ ամեն ինչ խաղաղեց, ըստ երեւոյթի։ Երկրի ոչ-քրիստոնեայ ազգաբնակչութիւնը թէեւ նոյնպէս շատ դժգոհ էր այդ կարգադրութիւնից, բայց եւ այնպէս լռում էր, որովհետեւ նա հնար չուէր իւր անբաւականութիւնը յայտնելու այնպէս, ինչպէս թուրքերը...։

Ինչ էլ որ լինի, թէեւ երկրի քրիստոնեայ ազգաբնակչութիւնը հաշտուեց այդ

կարգադրութեան հետ, բայց եւ այնպէս ցոյց էլ տուեց իւր անբաւականութիւնը զանազան տեղեր պատահած խռովութիւններով, որոնցից յիշեմ միայն մի երկուսը։ Մինչդեռ զինուորագրութիւնը չ'սկսած, այդ մասին գնում են Ղարաբաղի գիւղերում յայտնելու։ Գաւառապետի օգնականը զաւակների օգնութեամբ ուղեւորում են Տաթեա...։ Բայց ժողովուրդն իրեն առաջնորդ ունենալով մի քահանայ, ընդդիմաւում է նրանց, մի լաւ ծեծում է եւ փախչում՝ փակվում է Տաթեաի վանքը։ Այն տեղ մեծ դեր խաղում են կանայք։ Գործը անցեալ օրեր քննուեց Շուշիի նահանգական դատարանում, ուր մեղադրվում էին քահանան, մի պառաւ կին՝ 70-76 տարեկան եւ չորս գիւղացիներ, որոնք բոլորն էլ արդարացան՝ շնորհիւ տեղական հայ իշխանների ջանքերին եւ այն հանգամանքին՝ որ նոյն իսկ կառավարութիւնը, տեղացիների մէջ վայրոյթ չը գործեւում համար, թոյլ վարուեց գէպի այդ գործը։ Մի ուրիշ օրինակ։ Աղեքսանդրապոլ, որ միշտ զգուշ է եղել գէպի հայկական ոգին եւ սահմանին աւելի մօտ լինելով՝ միշտ միջոց ունի սպառնողական դրութեամբ լարելու իւր զգացմունքները, զինուորագրութեան մէջ եւս անտարբեր չը մնաց։ Եւ քաղաքին զինուորագրութեան ենթարկուելիք 10-15 հոգիներից փախուստ են տուել...։ Իսկ երրորդ եւ ամենավերջին գէպը պատահել է Վաղարշապատում, ուր ժողովուրդի զայրոյթը այնքան է սաստկացել, որ գաւառապետին, օգնականին (հայեր են) եւ նորանց պահապաններին քարերով, փայտերով փախուստ դարձուեցուց յետոյ, յարձակվում են իջմամբի փախել վերայ եւ սկսում են խռովութիւն բարձրացնել...։ Այս մասին մանրամասն տեղեկութիւններ դեռ ստացուած չեն։ Երկրի մէջ խռովութիւններ ամեն տեղ եղան, բայց ոչ մին էլ ընդհանուր կերպարանք չ'ունենալու պատճառով երկրիւղի չէ։ Արդէն համարեա թէ ամեն տեղեր էլ վերջացաւ զինուորա-ժողովը՝ որ սկսուեց նոյեմբերի 1ին։ Երեւանի նահանգի նորընտիրները պիտի ուղարկուին Ամարաթ՝ Իգտիրի մօտ, ուր ներանցից պիտի կազմուի առանձին հայկական գունդ։ Պէտք է ասել, որ ընտրութիւնների միջոցին հայ հոգեւորականութիւնը ջերմ աջակցութիւն ցոյց տուեց կառավարութեան։

ՄԱՍՆԱՅ

ՏԵՂԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Պատուական հանդիսիդ 3898 թուով «Տեղական Արուեստագործութեան» զարգացման մասին տեղական արուեստաւորաց կործինքն իմանալու փափաք յայտնած, եւ նոցա դիտողութիւնները սիրայօժար հրատարակելու պատրաստականութիւն, ինչպէս նաեւ գործնական միջոց եւ եղանակներ ցոյց տրուել առաջարկուած լինելով՝ մեք ամենայն սիրով եւ յօժարութեամբ ընթերցաւ զայն։

Միայն թէ նոյնպիսի միջոց հրատարակութիւններ քանիցս անգամ տեսնուած եւ ապարդիւն մնացած ըլլալովն այս անգամ դարձեալ տեղական արուեստագործութեան յետադէմ վիճակը նկատողութեան առնուեա-

լով դէպի յառաջդիմութիւն մղել որ կուգուի ցոյց տրուած եղանակները դարձեալ անօգուտ են եւ բնաւ չեն նպաստեր, վասն զի արգելիչ պատճառներու բուն ոգին այս անգամ եւս ոչ ի վեր բերուած եւ ոչ իսկ նախատեսուած է։

Մեք չուրջ քսան տարիէ ի վեր Տեղական Արուեստագործութեան աննախանձելի եւ ողբալի կացութիւնը նկատողութեան առած լինելով, երկրի մը զարգացումը մի միայն արուեստական ճարտարագործութեան յառաջդիմութեամբ կարենալ լինելուն քաջ համոզուած ենք։ Սակայն ի՞նչ օգուտ, որոնք եւ աշխարհի զօրաւոր եւ արգելիչ պատճառ մի ի վեր հանած ենք, որ նորա անհետացումը չ'ըսենք անհնարին, այլ խիստ դժուարին դարձած է այսօր, եւ այս արուեստագործութեան տապալում, երկրի յետադիմութիւն, եւ արուեստաւորաց աղքատութիւն եւ թշուառութիւն ըսպառնող առիթ տուած է, այն է եւրոպական ասպրանայ եւ շինուածանիւթոց նկատմամբ ընդունուած չնչին ՄԱՔՍՍԻԻՆԸ։

Այս է ահա ասիկա Տեղական Արուեստագործութեան յետադիմութեան բուն շարժառիթն ու ոգին։ Ուստի քանի որ մի եւ նոյն կացութեան ենթարկուած է երկիրն ու արուեստագործութիւնը, մեք եւս Ձեզ հետ ձայնակցելով կ'ըսենք թէ իրօք «Եւրոպական ճարտարագործութեան հետ մեր արդի միջոցներով մրցումն անհնարին է, եւ քոյրայումբ մօտալուտ»։

Մեր սոյն դիտողութեան հաստատութեան իրրեւ պարզ օրինակ եւ ապացոյց հետեւեալը մէջ կը բերենք։

Եւրոպայէ ի Յունաստան ներածելի մի զոյգ Լուսինի կօշիկ համար քսան դահեկան մաքսագին կը պահանջուի։ պատճառ. վասն զի տեղոյն կօշիկարք ժողովրդեան նոյն կարեւոր պէտքն ընդ միշտ կ'արտագրեն։ Իսկ եթէ յիշեալ ասպրանքը չնչին մաքսագնով ներուծի անդ, եւ տեղոյն ժողովուրդը մեզ նման դիւրամատչելի գրտներով գնէ զայն, ի՞նչ պիտի լինի յայնժամ կօշիկարաց վիճակը։ չէ՞ թէ անգործութեան դատապարտուելով աղքատութեան եւ որմէ յետոյ թշուառութեան անդունդը պիտի գլորին։ այս եւ ասոր նման բազմաթիւ փաստ եւ օրինակներ ունենալով աւելորդ է մի առ մի թուել։

Ըստ որում, քանի որ տեղոյն արուեստաւոր դասը սոյնպիսի անհանդուրժելի կացութեան մէջ կը գտնուի, ի՞նչ կարող է ընել։ Ընկերութիւններ կազմել՝ անօգուտ է։ վասն զի ժամանակն անցած է։

Եւրոպացի կամ Ամերիկացին, երկրի մը զարգացումն արուեստական յառաջդիմութեամբ լինելու սկզբունքն ի վաղուց ընդունած եւ յարգած լինելով մասնաւոր անհատ իւրեանց նիւթական զօրութեամբ մասնաւոր գործարաններ բացած, գործաւորներն ըստ արժանեոյն վարձատրելով քաջալերած, եւ նոքա ալ ամենայն ճգամբ աշխատելով եւ զանազան տեսակ արուեստական հեղինակութեամբ եւ մրցմամբ յառաջ երթալով, այսօր հրաշալի ճարտարագործութեանց վերջին ծայրն հասած, եւ ի նոցանէ թէ՛ նիւթական զօրութեան տէր, եւ թէ՛ գործարանատէրեր յառաջ եկած են, ինչպէս որ նոքա գործառնութեանց վրայ գրուած եւ կարդացած պատմութիւննիս վկաններ են, եւ մեր բոլոր էական եւ մինչեւ իսկ ամենատարին պէտքերն անգամ նոքա արտադրելով ի Պոլիս եւ այլուր կը փոխադրեն առ ի գործածութիւն մեր։

Այսպիսով թէ « Գերմանական լեզուներու հարաբերութիւնն հրապարակի վրայ դժբաղդ կացութեան մէջ կը գտնուին » : Ինչպէս չ'ըլլայ , մինչդեռ քանի քանիցս զէթ կատակատարեւելադործեալ ապրանքս համար բաւական աշխատութիւն եւ զգալի զոհողութիւններ յանձն առնելով մաքսադնոյ բարձրացում խնդրեցին եւ չը յաջողեցան :

Ի չարս արուեստագործութեան գործունէութիւն մ'ալ կայ , որ նա ալ ամենէն էական ըլլալով ուշագործեմէ վրիպած եւ նկատողութեան չէ՛ առնուած . եթէ յիշեալ արուեստագործութեան վրայ պարզ ակնարկ մը ձգուի՝ բացարձակապէս պիտի տեսնուի թէ , ինչ աստիճան կարեւոր է ժողովրդային պիտոյից համար , որն որ միշտ եւ հանապազ նշանակելի մեծ գործ կը լինի հրապարակի վրայ . ապացոյց , վասն զի չը կայ տնակ եւ մինչեւ իսկ խրճիթ մը , որ զանազան տեսակ դարբնական շինուածանիւթ չը կրէ , թողունք կանոնաւոր տանց եւ հոյակապ ապրանքից ամենակարեւոր եւ բազմազան պիտոյքներն . իսկ արդ՝ քանի որ դարբնական նիւթերն այս աստիճան կարեւոր են , ինչո՞ւ համար չը ձեռնարկի եւ մրցում չը լինի եւրոպականի հետ . անոր համար , վասն զի անկարելի է դիւրամատչելի գնով ի վաճառ գրուիլ , որովհետեւ նա՛ , մեքենական հրաշալի զորութեամբ գործելով մեծաքանակ ու մաքուր արտադրելով զիւրամատչելի գնով կը վաճառէ , իսկ տեղացի արուեստաւորը բնական մեքենայով « ձեռքով » եւ աննշան գործիքներու գործութեամբ գործելուն , ո՛չ մեծաքանակ կրնայ արտադրել եւ ոչ ածան գնով ի վաճառ դնելով մրցիլ :

Թողունք ասաղծագործութեան , վանդակագործութեան , փորագրութեան , ոսկերչութեան եւ ի մի բան պատկերհանութեան եւ այլոց նման ո՛չ նուազ կարեւոր ինչ ինչ արուեստագործութիւններն , որոնք երկրորդական եւ երրորդական գումար հարկ չենք համարիր առ այժմ կարծիք յայտնել նոցա վրայ :

Եւ դարձեալ կ'ըսուի թէ : « Կարելի՞ չէ որ մեր արհեստաւորը հետզհետէ իւրացնեն եւրոպացւոյ յառաջդիմութիւնն , յեւրոպա կամ Ամերիկա զրկելով երկրասարգներ որք ուսանին եւրոպական արհեստագործութեան եղանակներն , եւ ապա Թուրքիա վերագաւազելով օտարին ոչ մի կուրին հաւասար զէնքով » :

Ինչ ազնիւ գաղափար եւ գովելի խորհուրդ :

Ճշմարտութիւնը խոստովանելով թէ եւ այդ առաջարկութեան դէմ խնդիր չը կայ , սակայն պէտք է գիտնալ թէ այդ միջոց մասնաւոր անհատը ոմանք արդէն ինքնաբերաբար ի գործ դրած , կատարեւելագործեալ արուեստ ուսած , եւ Թուրքիա վերագաւազելուն ոմանք անգործ եւ ոմանք ուրիշ տեսակ աշխատութիւններու ձեռնարկած են , զորս ի հարկին կարող ենք մատնանիլ ցոյց տալ :

Այսու հանդերձ դիցուք թէ Եւրոպա կամ Ամերիկա երկրասարգներ զրկուին եւ կատարեւելագործեալ արուեստ ուսած Թուրքիա վերագաւազան , ինչ արդիւնք պիտի կարենան ցոյց տալ . միթէ գործարանատէրէ՛ր պիտի լինին , ո՛չ . վասն զի դրամ չ'ուրին . միթէ իւրեանց սուջեւ օրինաւորապէս կազմակերպեալ գործարաններ պատրաստ պիտի գտնեն , ո՛չ . վասն զի չը կայ անհատ մը եւ մինչեւ իսկ ընկերութիւն մը , որ օգնէ միջնակարգ դարբնական գործա-

րան մը բանայ եւ կամ նոյնպիսի գաղափար մը ունենայ . հապա ինչ պիտի լինի նոցա կացութիւն , չէ՞ թէ տեղացւոց նման մասնաւոր խանութ բանալ , յաճախորդաց այր՝ կամ ո՛չ ըսել , եւ ի մի բան չլացուցիչ խօսքերով այս ու այն համոզել եւ օրասպանիկ ձարկու պիտի դատապարտուին :

Հետեւաբար , վերստին բուն խնդրոյն դառնալով եւ եղբակացելով կ'ըսենք թէ , քանի որ Տեղական Արուեստագործութիւնը տապալման եւ քայքայման վտանգի ենթարկուած է , երկրի ժողովրդեան ուրիշ ինչ չը մնար ընել , բաց ի ինքնօգնութեան դիմել , նպատակ ունենալով միանգամայն թէ կարելի եղածին չափ տեղական արուեստական արտադրութիւնը գործածել ինչ որ ալ լինի նոցա տեսակ եւ աստիճանն , որով թէ՛ գործող արուեստաւորը նիւթապէս օգտին , թէ՛ արուեստագործութիւնը տակաւ առ տակաւ յառաջդիմութեան քայլ առնու եւ թէ երկիրը նիւթապէս եւ բարոյապէս զարգանալու կերպարան , եւ այն ատեն միայն յեւրոպա կամ Ամերիկա երկրասարգներ զրկել հարկ է , որք կատարեւելագործեալ արուեստ ուսնելով եւ Թուրքիա վերագաւազելով գործեն եւ աշակերտներ պատրաստեն :

Այս է ահաւասիկ Տեղական Արուեստագործութեան զարգանալու եւ յառաջդիմելու նախնական սկզբունք եւ միակ միջոց , եւ այս ալ ուրիշ եղանակաւ չ'ըլլար այլ միայն հայրենասիրութեամբ , հաստատ համոզումով , ազատ կամքով եւ Զանքով ու զոհողութեամբ միայն :

ՅԱԿՈԲ Պ. ԿԵՎՐԵԿԵԱՆ ՄԻՆԱՍ Յ. Յ.

ՍԱՐԴԱՅԻՆ ԲԱՐՔԱՌ ԵՒ ԼԵՁՈՒՔ

Ն Ա Ի Ա Կ Ա Ր Գ Բ Ա Ն

Արդեան ոճով լեզուարանական գիտութիւնն երկիւեան մանուկ է , կորովի առուգութեան ցուցիւքն հանդերձ : Թէպէտեւ ԺԶ եւ ԺԷ դարուց մէջ փորձք ինչ կը տեսնուին համեմատական լեզուաբանութեան , որպէս Քալէփիւնոյի Մեթասան լեզուաց Բաւաթիքն , Քոնրատկէսնէրի Մէհրէթարն (1555) , Կիչառի Սոթաթաթաթիան հատմասութիւնն , եւ թէպէտ բանասիրական ուսումն ի վերջ կոյս ԺԸ դարու աւելի կը յառաջանայ լեզուագիտաց ոմանց երկասիրութեամբ , յորս նշանաւոր է Պալլասի Հաճախորդական Բաւաթիքն , բայց բուն լեզուաբանական գիտութիւնը կը հիմնուի եւ կ'ընդունի այլ ի վերոյ այլոյ հաւաստիս ի սկզբան այսր դարու , երբ ի լոյս կ'ընծայուին հետզհետէ Յովհանէս Քրիսթոֆ Ատէլուէկի Մէհրէթարն կամ ընդհանրական պարկերն լեզուաց տպեալ ի Պէրլին (1806) , Յ. Շլէյխէի Լեզու Եւ Իմաստութիւն Զնայց (1808) եւ մանաւանդ Յրանձ Պոլի Հատմասութեան Բերականութիւնն Կընդհանրական լեզուաց (1816) : Ապա կուգան Գուլիէլմ Գոն Հուսպոլտ , Պիւստուֆ , Յակոբ Կրիմ եւ այլք : Աշխատութեամբ սոցա լեզուաբանութիւնն ըստ բաւականի կը պարզէ բարբառոյ ծագման խնդիրն , եւ ուր երբեմն խնամատեքը մտաւորական վերատեսութեամբ միայն կարէին պարտապէս , եւ իմացական կարողութեանց կամ արարողականութեանց վերլուծութեամբ կը խնդրէին այդ ծագումն , լեզուաց իսկ կը հարցանէ

նա զիւրեանց ծնունդն ու զարգացումը : Տոհմորոշ առնելով բարբառայն լեզուներն՝ ազգաց ընտանութեան զօգերն կ'որոշէ , ժամանակաւ համազգի կարծուածներն՝ օտարացեղ եւ ահագին հեռաւորութեամբ տարակացներն համասեր ցոյց կուտայ , եւ օժանդակութիւն մատուցանելով այսպէս ազգաբանութեան՝ բազում զիտական խնդրոց վրայ լոյս կը տնայ :

Այսու ամենայնիւ ի մասին այդքան չաշխատեալ եւ ցանկալի գիտութեան ապաւտարանութիւնութիւն կը տիրէ առ Հայս , մանաւանդ առ բնակեալք ի Թուրքիա : Եթէ ուրեք երբեք կ'երեւին առ մեզ լեզուաբանական գրուածք , այնորիկ եւս՝ կամ ինքնաշնար այլանդակ եւ անցուցական գրութիւն մի տաճի առնեն , որպէս էր Թագաւորեան Սերոփէի տետրակը գաղղիերէն լեզուաւ՝ տպեալ ի Կ. Պոլիս յամին 1881 մակագրութեամբ՝ Essai d'un système de linguistique comprenant l'interprétation des racines par les lettres de l'alphabet , կամ այլովք թերութեամբ արարեալ են , եւ կամ այս ու այն բառի ըստուգանութեան վրայ մանր գրուածք : Յակն գան եւեթ վերապատուելի Հ. Սերոփէ Տէրփիլեանի Հնդեւրոպական Նախախնայն ընդ այլոց գրութեանց նորին եւ Լեզու հանդիսին , որք չեն համայն եւ այնպէս ի յոգուոնց ընթերցեալ Թերակատար վեր ի վերոյ եւ խառն ի խառն են ապա բազմաց ի մերացնէից ծանօթութիւնը գրովանդակութեան եւ զհանգամանաց լեզուաբանական գիտութեան , զգլխաւոր բաժանմանց նորին եւ զկարեւորագոյն խնդրոց :

Եւ որովհետեւ յարգեացս իրաց կարգի է այդ օրինակ հարցիւք պարապիլ , ի պատճառս այն վիճաբանութեան զոր յարոյց անմասնութիւն Հնդեւրոպական Նախախնայն ի մրցանակէն Իզմիրեանց , մեզ ոչ տարաբէս թուեցաւ նատարել ըստ մասին մերում ի ծանօթութիւն նորոյ վիճակի լեզուաբանական գիտութեան եւ խնդրոց ինչ , նախ՝ խօսելով մարդկային բարբառոյ կամ խօսից որպէս սկիզբն առնելոյն կամ ծագման վրայ , ապա՝ լեզուաց ստացած տարբեր կերպարանաց եւ փոփոխմանց՝ որպէս եւ դասակարգութեան կամ տոհմաթուոց վերայ : Համեմատադիժ պատկեր մի է սակայն զոր կուտամք ծայրաքաղ առնելով յեւրոպական գրութեանց , մանաւանդ ի Հնդկաստանէն Եւրեթից Յր. Լընորմանի , զի մանրամասն եւ ընդարձակ ընծայութիւնը լեզուաբանական համագրութեան կամ մատենի կը պատշաճի :

Ա .

ՅԱԿՈԲՄԵ ԲԱՐՔԱՌՈՅ

Ի վաղ ժամանակաց հետէ՝ մարդկային բարբառոյ ծագման խնդիրը բնական իմն հետաքրքրութեամբ յուզուած է : Մինչեւ ց'սկիզբն ԺԹ դարու կարծուեցաւ ի բազմաց թէ սկզբնամարդոյն Ադամայ լեզուն կը մտանէր ընդ թիւ այն լեզուաց որ կենդանի բարբառով կը խօսուին կամ ի գիրս կ'ընթերցանին : Ոմանք եբրայեցեանի կ'ուղէին տալ այդ առաջնութեան փառքն , որպէս Յուսոդոս Լիւիսիոս , Վոսսիոս , Կալմէտ եւ անտուածաբանք եւ Աստուածաշունչ գրոց մեկնիչք . մինչ ասորերեւի , քաղդէարեւի եւ եթովպացւոյն կ'ընծայէին զայն Լիբանանու Մարոնիք , Թէոդորիտոս եւ Միւրիկէոն . իսկ Եգիպտացիք եւ Չինացիք անդրանկութեան իրաւունքն իւրեանց ազգային լեզուի կը սեպհականէին : Հ. Միքայէլ Զամէեան ,

Հ. Ղուկաս Ինձիճեան, եւ առ Եւրոպացիս Ամիրայ յորջորջմամբ ծանուցեալ հայազգիին փաստաբանած են ի նպատակ հայերէն լեզուի: Եղած են և յարգելի գիտունք ոմանք որ կամ իւրեանց օրոքից եւ կամ դրու-թեան իմիջ հետեւելով այս կամ այն լեզուի նախաւորութեան պաշտպան հանդիսացած են, որպէս Ստորին-Բրիտանիոյ բնակչաց կամ Բրիտանաց լեզուին որ կը կոչի Բրէյ-զադ կամ բրիտաներէն, փլանդերականին, բասկացոյն, կելտերէնի: Գեռ իբր երե-սուն կամ քառասուն տարի առաջ այսպիսի կարծիք եռանդեամբ կը պաշտպանուէին յոմանց ի գիրս, եւ այժմ իսկ առ մեզ հայերէն լեզուի առաջնութիւնն՝ եւ թէ ոչ ի մտեանս եւ ի հանդէս՝ գէթ ու-րեք ուրեք բերանացի վիճաբանութեանց մէջ իւր ջերմ ջատագովներն ունի, եւ գու-ցէ՝ երբայեցեբէնն եւս առ այլ յազգաց, թէ ի հնունն եւ թէ նոր ժամանակաց մէջ սոյն խնդիր թագակիր գլխոյ եւս ընդ-սիրութեան առարկայ եղած է որք ի փորձ իսկ մտաբերած են առ ի գտանել զայդ նախաւոր լեզու. նշանակելի է ապաքէն այն փորձ զոր ի սկզբան ժնդարու Պարսից չաճ մի, նոյն ինքն Մեծն Շահ Աբաս Ա. ըրած է, ցոյց տալով այսպէս իւր ժամա-նակաց եւ հետագայից թէ չէր անխնայ-տաւէր մտաց վիճակեալ: Նորա ձեռնար-կութեան արդիւնք աղերս ունի բարբառոյ ծագման վրայ իմաստասիրաց վերատեսու-թեանց հետ: Վասն որոյ լիով իւրով յա-ռաջ կը բերեմք աստ Զաքարիա սարկաւա-գի պատմագրութեան Ա. հատորոյ ԼԱ գը-լուխը, ի հետաքրքրական տեղեկութեամբք զայնմանէ, սկզբան մի պարբերութիւնն ե-ւեթ ի բաց թողլով:

« Գանդի թագաւորն Աբաս կարի սիրէր զպատմութիւնս, զհակաճառութիւնս, զկա-տակս, եւ զժողո՛ւս, զընդունութիւնս հաւա-տոյ եւ զխօսակցութիւնս: Յաւուր միում ժողովեալ էին առ նա ամենայն աւագա-նին, եւ խօսէին վասն հաւատոյ, եւ լեզ-ուաց քաղցրութեան եւ վարժամութեան, եւ վասն առաջին լեզուին որ տուաւ Ադա-մայ, ոմանք ասացին՝ հրէից լեզուն գոլ ա-ռաջին, ոմանք՝ Եթովպացոցն, ոմանք՝ այս եւ ոմանք՝ այն, իսկ չաճն ոչ հաւանեցաւ ասացելոց միում ի նոցանէ: Այլ հրամայ-եաց Լաւա-բէկ իշխանին՝ եւ ասէ, տես՝, թէ որքան լեզու գտանի յաշխարհիս Աս-պահանու, դու ժողովեա՛ յամենայն ազ-գաց ստեղծեաց մանկունս՝ արու եւ էգ, որ շեւ իցեն արձակեալ լեզուս իւրեանց, եւ լից ի տուն մի արձակ եւ մեծ. ի գի-շերին վառեա զճրագ. եթէ ցրտացի, լոյց խարոյկ, եւ մարց նոցա պատուիրեա՛ բնաւ ոչ խօսիլ եւ ոչ ժպտալ, այլ զսպել եւ մաքրել, դիեցուցանել եւ լոգացուցա-նել առանց խօսելոյ, եւ ոչ դնել յօրօրոց և ոչ ի ճոճ, այլ ի յերկրի ի մահիճ, եւ զծախ-սըն յարբուսուսա եղիցի մարց եւ տղայոցն. ի գիշերի ննջեսցին մարք առ մանկունս եւ ի տունջեան կացցեն յայլում տան եւ կա-ցուցեն երկու ներքինս պահապան նոցա զի թէ ոք լացցէ, նոցա ազդ առնիցին մար-ցըն նոցա լռելեայն, զի եկեալ դարմանես-ցեն զտղայսն: Զայս պատուիրեաց առնել, եւ ասէ, տեսցո՛ւք՝ զինչ լեզու արձակեն նոցա, այն է լեզուն որ տուաւ Ադամայ: Իսկ իշխանն Լաւա-բէկ արար զհրամանն, եւ զարդարեաց զտուն մի բացադոյն ի շի-նութեանէ: Զի մի՛ լուիցեն զձայնս երգոց եւ գուսանաց, եւ ժողովեաց մանկունս ի ի ազգաց, որք գտան յԱսպահան, որք են

ի քրիստոնէից է ազգ, եւ այլ ազգաց ժԳ. նախ ի քրիստոնէիցն այսորիկ են, հայ, յոյն, լատին, ասորի, վիր, աղուան, բո-չայ: Եւ այլ ազգաց ժԳ. ազգ, որք էին տաճիկը, պարսի՛, վաթ, գեաւս, մար, լու, լակլի, օգրէկ, ջաշաթայ, զիլաք, հրեայ, հնդկի, եթովպացի: Այսքան ազգաց ժողո-վեաց բազում մանկունսն երկամեան, և ե-լից զտունն արու եւ էգ: Եւ եթէ ոչ մե-ռա էր ի նոցանէ, բերէին փոխանակ նորա այլ: Եւ յետ տարւոյ միոյ արձակեցին լե-զուս յօգաւորս, եւ ասէ՛ եւ ոչ մի էր լե-զուացն, այլ խօսական եւ բեկրեկ, եւ գա-լին բազումք անմուսն՝ եւ լսէին զխօսս նոցա, եւ ոչ իմանային: Առուէին, խաղա-լին, ծիծաղէին, լայլին: Եւ յորժամ մարք նոցա մտանէին առ նոսա, եւ նոցա գային եւ խուճապէին զհարքըն, եւ մորմոքէին, իսկ չաճն եւս եկն և ետես զխօսական խօսս նոցա, եւ հրամայեաց սիռեւ չամիչ. եւ նոցա թափեցան ի վերայ ճուղով եւ ճչա-լով, և ոչ ոք գիտաց եթէ զինչ լեզու էր: Եւ ասէ չաճն. կոտորեցէք զգոսա, զի մի աճեացի բարբառոգ այդ: Բայց Լաւա-բէկն ո՛չ եթող կատարել, և ետ ցմարս իւրեանց՝ եւ ասէ. իրթեալ ուսանին զլեզու մօր իւ-րեանց: Եւ արարին այնպէս, եւ փութով ուսան զհայրենի լեզուն: Զայս պատմեաց Մարկոս վարդապետն Զաղայեցի, որ էր Առաջնորդ Հաւուց-թաու, եւ ասէր. Ժո-ղովեալ մանկանց մինն հօրեղբայրն իմ է լեալ:

Այս փորձոյ արդիւնք, որ Շահին հա-մար յաւէտ բացասական էին՝ զի չէին ըստ ակնկալութեան նորա, ունին սակայն կա-րեւորութիւն: Յոյց կուտան թէ բնաւ մարդկային ձայն չառնող մանկունք կարեն յինքեանց յօլաւոր լեզու արձակել, թէ և խօսական եւ խեցեկաղոյն, եւ օտար յա-մենայն կենդանի կամ խօսեալ լեզուաց, որպէս գիւրին էր մակաբերել մանկանց առ հասարակ արձակած բարբառէն՝ սովորա-կան պարագայից մէջ:

Մարդկութիւնն ևս ի տիս իւրոյ մանկու-թեան այդպիսի բարբառ արձակած է ան-չուշտ: Փորձոյն արգասիք կ'օգնեն նաեւ առ ի խելամտութիւն մտաւտեսութեանց ա՛յն իմաստասիրաց որ պարագայած են բար-բառոյ ծագման գծուարին խնդրով, եւ հետազոտութիւնաց այն յետամտ լեզուա-ըննաց որք կը յուսան թէ կարելի պիտի լինի վերջնական լուծումն տալ նմին եւ մերձ իսկ լինել կը կարծեն յայն, թէ եւ ի բանասիրութեան իբր բոլորակին ի քառա-կուսի չըման խնդիրն է այդ ըստ ոմանց:

Ի հնոյն յունաց՝ բացի Պլատոնի մի տը-րամախօսութենէն եւ ի բանից ինչ Արիս-տոտելի՛ չ'ունիմք՝ այլ ինչ մարդկային բար-բառոյ իմաստասիրակ սն էութեան եւ ծագման վրայ: Բազմաց ընդունելի եղած էր Եպիկուրեանց կարծիքն որք կը համարէին զմարդն անխօս իսկզբան հանգոյն անաս-նոց, որ ապա ի կարեաց ստիպեալ կ'սկսի արտաբերել ձայներ, զառաջինն անյօք եւ խառնարձակ յագաչմունք եւ վայմունք մարդկութեան տղայ տիոց, եւ յետոյ տա-կաւ բարեյօք եւ ի կատարելութիւն աճ-եալ:

Նոր իմաստասիրութիւնն է մանաւանդ որ ի խոյզ եւ ի խնդիր ծագման բարբա-ռոյ բազումս ճշմած է, Լոք ի վերջ կոյս ժնդարու իւր ճաշակին զորս գրոց մին բա-ռից ընդունութեան կը նուիրէր: Բայց իւր զգայապաշտ վարդապետութեան անձուկ սահմանաց մէջ պարաւանդեալ կարող չ'ե-

ղաւ գտանել խնդրոյն պարտ ու պատշաճ լուծումն: Լայպից, ասէ Ֆրանսուա Լը-նորման, պատասխանելով Լոքի, և իւր հան-ճարոյն բովանդակ զօրութեամբ եւ պեր-ճութեամբ ի վեր ունեյով մտաւորականու-թեան դրօշն, զհետ սնդեցաւ իւր ոտխին յասպարիզի անդ վերլուծական ըննութեան բարբառոյ եւ ծագման նորին: Անդ եւս յաղթահարեց զնա իւր ընդարձակածաւալ հմտութեամբ եւ սքանչելի իմացականու-թեան վեհութեամբ: Լայպից նախատե-սեց լեզուաբանութեան գլխաւոր գիծքն և իմացաւ նորա պիտաուութիւնքն, հերքեց այն թուիքն թէ մարդկային բարբառն ար-տաբին պատճառաց ազդեցութեան ներքեւ ըստ կամի պայմանեալ ինչ է, եւ ցոյց տը-ուաւ թէ մտաց բնական արարողականու-թեանց եւ ընդածին գաղափարաց մէջ պարտ է խնդրել այն հարկաւոր հիմունքն յորս հաստատեալ են խօսից նշանք: Լայպ-նից՝ բազդատեց այն զանազան տարբերքն որ առձեռն պատրաստ կային յիւրում ժա-մանակի, եւ հնօրիմաց սրամտութեամբ ի խնդիր եղեւ առնչութեանց ընդ ձեւս բա-ռից եւ ընդ գաղափար յայտնեալս նոքօք. վարելով ընդ այս չափը՝ հասաւ մերթ ի-րական և մերթ նաեւ կեղտկարծ արդեանց:

Քոնտիլեաք խուս ինչ փոփոխութեամբ այդ գաղափարաց ջանաց միարանել զայնս իւր զգայական վարդապետութեան հետ, այլ լաւագոյն եղբակացութեան չը հասաւ. նա կը դնէ խօսքն ոչ միայն խորից օժան-դակ, այլ առաջին եւ անհրաժեշտ պայման: Որպէս հաւաստի է թէ առանց խորհից չիք խօսք, նոյնքան հաւաստի կը համարի թէ առանց խօսից եւս չլինի խորհեցումն: Եւ որովհետեւ վերացեալ եղբերէ կը կազմուի մտաց խորհուրդն, հարկաւոր է այդ եզե-րաց գոյութիւնը: Մարդն է ուրեմն զա-ռաջինն համր. ապա զգայութիւնը ծնունդ տալով ի նմա խորհեցման՝ ըստ նմին ծը-նունդ կուտայ եւ խօսից, որք նախ ի բը-նական նշանաց կը յօդին եւ յետոյ ուրեմն ի կամակայանաց: Այս գաղափարներն են զորս կ'ընդունի Փրանկիսկոս Սուէ, եւ ըստ ամանէ՝ Հ. Արսէն Բագրատունի յա-զատորէն թարգմանութեան Բանական աբ-աեոթի կամ Տրամբանութեան նորին:

Խ. ՈՒՂՈՒԲԻՆԵԱՆ
(Մնացեալն յաջորդ Բաւալ)

ՄԱՆԻԻԼԵ

ԳԵՂՈՆ

(Շար. Նախորդ Բէւէն և վերջ)

Գ.

Ինը տարի էր յորմէհետէ այս վշտագին կեանքը կը տեւէր. ինը տարի այսինքն ինը դարեր, որովհետեւ տարիներն յամր կը սահէին մօրը համար որ միայնակ կ'ապրէր այդ անապատացեալ ընտանեկան յարկին մէջ:

Բայց միւս կողմանէ տարիներն շուտ կ'անցնէին այս առանց գաղարի եւ առանց հանգստեան ճանապարհորդութեան մէջ զոր Պոհեմիացի սեւ տղաքները կ'ընեն աշ-խարհիս մէջէն:

Այս թափառական կենաց մէջ երբեմն

կը պատահի որ իրենց արդէն իսկ տեսած տեղերը կուգան յանդէս յամ' կ'անցնին այն ճամբէն ընդ որ անցած էին արդէն :

Եւ ահա որ մը Տարկո թագուհին, փայլուն մազերով գնչուն, Թրանսա, Սպանիա եւ Իտալիա չըջնէ գինի իրեններուն հետ մէկտեղ կը հասնի հոն, ուր Անժէլ այնքան հանդարտիկ անցուցած էր իւր առաջին տարիներն, ուր սորված էր ժպտիլ ու թոթովել, ուր փորձած էր իւր առաջին քայլերը մօրը կրթնած, մօրն՝ որ ամեն ատեն երջանիկ էր, խնդումէնէ յիմար, իսկ այժմ՝ կ'արտասուէ ու կ'աղօթէ յիմարացեալ առ զլսին :

Վրանները կանգնեցին գաւթին կից անտառին մէջ եւ կը պատրաստուէին անդ գիշերել :

Այլ ո՞վ հրաշից . այդ գեղջկական նկարն Անժէլի սրտին մէջ զարթուց այն յուզմունքներն՝ զորս երբէք զգացած չէր մինչեւ այն օր : Զայն մը տրձապանդեց սրտին մէջ . Յիշատակներ յիշեց նա, այդ մանուկն՝ որ եւ սակայն հիմա գեռափթիթ ու գեղանի աղջիկ մըն էր, եւ զոր կը կոչէին « Աչագեղ Ոգի » . եւ այս յիշատակները կ'ըսէին իրեն : Հոն, վարը, սա թոյրաթուս փիճեաց ու կապոյտ լերանց ետեւ ծնած ես գու . հոն, վարն է ուր մայրիկդ բեզ կ'սպասէ : Եւ իւր աչքերով տրտմագին կը հետեւէր այն ամպին՝ որ կապտադոյն լերանց ետեւ կ'անեւրեւութանար, թռչնիկին՝ որ արագաթըռիչ սեւաթոյր փիճիկներէն անդին կ'անցնէր, եւ հառաչելով կարծես կ'ըսէր անոնց . Անպ, թռչնիկ, փիթէ մօրկանս կողմերը չէ՞ք երթար :

Ամբողջ գիշերն Անժէլ յուզեալ էր ու վրդովեալ անկողնոյն մէջ . Կորս անսովոր քնառութիւնը չը կրցաւ վրիպիլ ուշադրութենէն Տարկո թագուհոյն, որ ինքն եւս արթուն էր : Զի նոյն իսկ ինք երեկոյին իւր վրանը պարզած ատեն, տարօրինակ բան մը զգացած էր որ կը կապուէր վաղեմի յիշատակի մը հետ :

.....

Կը հնչէր այն ժամն յորում ծաղկունք կը փթթին հատիկ հատիկ վար գլորելով մարգարիտներն որովք ցօղը զիրենք պծնած է : Անժէլ կամացուկ մը ելաւ . եւ սկսաւ թափառիլ գիտատանին շուրջն, որուն մօտ գնչուններն իրենց շքեղաշուք ցնցոտիներուն մէջ փաթթուած կը ննջէին դեռ . առանց նպատակի կը թափառէր, միշտ յառաջ կ'երթար՝ տերեւաթափ ընելով այն ծաղիկներն որոնց կը հանգիպէր ձեռքը . կը հետեւէր թռչնիկին որ իւր խարտեալ մազերը քերելով կ'անցնէր, զիտելով ակնապիշ այն ցնորական ու փոփոխական սպտկերները զոր հովէն հալածեալ ամպերը կը կազմէին : Մերթ կանգ կ'առնուր, քնքուշ գլուխը կըրծօցը վրայ կը կախէր . աչքերն անթարթ կը պնտուէին, դէմքը կը տփուկէր : Ի՞նչ էր պատճառն որ այսպէս մտախոհ կ'երագէր : Ո՞րից կուգար այս տրտմութիւնը կամ լաւ է ըսել այս մտատանջութիւնը : Միթէ պատաւ Տարկոն կեղծ մարգարիտներով զարդարուած մանեակ մը, կարմիր չըջող գետ մը կամ ժապաւէն մը պրցած էր իրեն : Ո՞չ . Անժէլ կը մտածէր այն ձայներուն վերայ որք իւր սրտին մէջ արձագանգած էին առջի իրիկուն . կ'ամփոփէր այս ամեն յիշատակներն որք այս տխուր կեանքի մէջէն լուսաւորած էին յանկարծուստ իւր միտքն . անստոյգ՝ բայց կենդանի յիշատակներ, շնորթ՝ բայց գիւթիչ ձայներ :

Ահա այս էր պատճառն որ Անժէլ կ'երագէր, մտախոհ էր ու մտատանջ :

Կորէն սկսաւ քալել, աւելի շնչառապառ, աւելի ճնշեալ . բնագոյն մը կ'առաջնորդէր, խորհրդաւոր, երկնային, անդիմադրելի ձայնէ մը կը մղուէր :

Կ'երթար . . . բլրէն ի վեր կ'եղնէ . . . եւ ահա յանկարծ կը նշմարէ ի հեռուստ մառախուղին մէջէն երկու սպիտակ աշտարակներ կարմիր կղմինարներէ՝ ծածկուած սրածայր տանիքներով :

Ո՞հ, յայնժամ չիօթ ձայներն որոշապէս կը խօսին մանկան սրտին մէջ, նորա տարտամ յիշատակները կ'ստուգուին, բովանդակ անցեալը լուսապայծառ կը պատկերանայ մոտոյն առջեւ, դգեակն՝ ուր լոյս տեսաւ, ընդ արձակ դարաստն՝ ուրկից անդին պէտք չէր որ անցներ, անտառն՝ իւր վայրի թութերով, վերջապէս ամեն ինչ եւ մանաւանդ մայրն որուն պաշտօնն հիմա ուրիշ մը յափշտակած էր :

Մարդկեղէն բնութիւնն այնչափ զօրաւոր չէ որ դէպքերուն տիրէ . ուրախութիւններ կան որք զմարդ կ'ահաբեկեն : Հէքն Անժէլ ի տեսիլ այն պատկերին որ յանկարծ պարզուեցաւ իր աչաց առջեւ, եւ այս անանկեալ յայտնութեան, միայն ազդակ մը արձակելու զօրութիւնն ունեցաւ, արտասուադին եւ սրտառուչ աղաղակ մը՝ որ եւ սակայն բեզուն էր յուսով . Մայրիկս :

Գնչու կիներն, որ ի հեռուստ կը հետեւէր նմա անհանգիստ ու խռովեալ սրտով, լսեց այս աղաղակը, վազեց . իւր գազանական քէնն, Անժէլի համար ունեցած տարօրինակ սէրը ձանչցնել տուաւ իրեն աներկաբայապէս այն տեղին, ուրկէ ինք ասորիներ առաջ որսի մը պէս իւր կորովի բաղկաց մէջ առնելով տարած էր այդ խարտեալ մազերով մանուկը : Խորխոս ու վայրագ բռնելով զԱնժէլ, բնակավայր տարաւ ու հրաման տուաւ վրանները ծալել ու մեկնիլ : Նա այնպէս կը սիրէր իւր որդեգիր աղջիկն ինչպէս մատակ վագր մը իւր ձագերն :

Եւ ահա այս չարաղէմ գնչուններն երեք երեք ըլլէն վար իջնելով փութով ընդարձակ ցախատաններու մէջ կը մտնեն : Անժէլ լռիկ էր եւ յուսահատ : Զորիներէ լըծեալ սալակի մը խորը կղկտած գէմք ծածկած էր զգետին մէկ ըղանցքին մէջ ոչ թէ զինքը ցրտէն սպառնալարելու, այլ յորդառատ արտասուելու համար : Տարկո թագուհին քովը նստած, զայն կը դիտէր : Բայց ժանտ եղանակը ճամբայներն դըժուարակօս ըրած էր եւ մինչեւ իսկ ուրեք ուրեք անանցանելի : Ուստի փախստականք ստիպուեցան կանգ առնուլ : Մտան ցարասույ մը անտառակի մէջ եւ պատրաստուեցան հոն մնալ մինչեւ հետեւեալ օրն : Անմիջապէս պատսպարաններ կանգնեցին, կիները ձեան վրայ խարոյկ վաւեցին, մինչդեռ արք իրենց հրացանները լեցնելով զընացին երէ զարնել եւ դեռատի տղաքները՝ փայտ ժողովել, Ընդհուպ խորովեալ մսին հոտն օդին մէջ տարածուեցաւ, սկաւառակները լեցան, ամբոխն որ ցրտէն ընդարմացեալ էր, բոլորուեցաւ, սկահներն իրարու կը զարնուին եւ, մինչդեռ մայրերն իրենց երախայները զրկաց մէջ առած կը տատանէին մեղմով եւ զանոնք ընացնելու համար մենաձայն երգ մը կ'երգէին, արք կը ծխէին ու տապալի կը խաղային :

Ամեն ոք բոցածաւալ խարոյկին շուրջը բոլորուած կը ընանար տակաւ, այո, ամեն

« ք, բացի Անժէլէ, որ միայն մէկ խորհուրդ մ'ունէր, մէկ մտատանջութիւն մը, այն է հասնիլ գեղեակ որուն կարմիր ստուերական ծրագիրը նշմարած էր մառախուղին մէջէն եւ ժառանգել այն բարեբաստիկ վայրկեանըն, յորում սլտի կրնար վազել գէպ առնա, որ կը սիրէր զինքն եւ որ կ'սպասէր իրեն ինք տարիներէ հետեւ :

Այս վայրկեանն հասած էր . գնչուններն, արք եւ կանայք սպառնալ այն երկարատեւ ճեպընթաց ճանապարհորդութենէն զոր ընել տուած էր իրենց թագուհին, տըղաքներն եւ պահապան շուններն եւ նոյն իսկ Տարկո, այն կասկածոտ ու վայրագ Տարկոն, ամենքը խոր քնոյ մէջ ինկած էին : Անժէլ վեր առաւ իւր տփույն գլուխը, վերջին ակնարկ մը ձգեց շուրջը, սողալով քնացողներուն շրջանակէն դուրս սարդեցաւ, վրանին մէկ անկիւնը վեր առաւ . . . : Ալ ազատ էր . . . :

Կը տեսնէք թէ կը վազէ, միշտ յառաջ կը վազէ այդ միջին գիշեր ատեն :

Բայց ո՞ր կ'երթայ :

Աւա՛ղ, ո՞ր կ'երթայ ձիւնը զոր հովն իւր սրաթեւ թռչններուն վրայ առած կը տանի : Ո՞ր պիտի իյնայ մահաշունչ հիւսիսակէն արտալածիկ դալկահար տերեւն Ո՞ր պիտի կանգ առնու այն ծառատունկը՝ զոր կը վարեն հեղեղին տղուստ ջրերը մռնչմամբ . . . :

Դ .

Բնութիւնն իւր ձիւնէ ցրտին պատանն հագած էր . միջին էր գիշերը . գետը չէր հոսեր, միապաղաղ բխրեղ մը դարձած էր : Զարհուրելի լուսութիւն մը կը տիրէր ամենուրեք, խանգարուած եւեթ՝ այն հովէն որ կը մոլեգնէր անտառին մէջ հանդ մռնչմամբ, կը ճարձատեցնէր ամեն ինչ որ կը գիւնադէր իրեն, արմատաքի կը խէր, կը կործանէր եւ իւր ճամբուն վրայ կը նետէր, թող ըլլար աղքատին հիւղակը կամ հարուստին հոյաչէն սլալատը :

Վայ այն շնչառապառ ուղեւորին՝ որ դադար կ'առնու ճամբան . . . :

Սակայն եւ այնպէս, հոն, վարը, խաւարին մէջ ստուեր մը գծուի . հիւսիսակն որ դողցես մերկացեալ ծառոց մէջ կը ձիծաղի, հառաչանքներ կը բերէ իւր հետ :

Այս ստուերն Անժէլն էր, հնգետասան ամեայ կոյսն, « Աչագեղ Ոգին », Անժէլ՝ որ այս ժամուս կը թափառէր մեծ պողոտային վրայ : Իւր անյարգար մազերը կը թափէին պայծառադոյն ցնցոտիներուն վերայ որք հազիւ հազ կը ծածկէին իւր ընդարմացեալ անդամներն . աչքերը կը լեցուին արտասուք որք կուգան թրջել իւր հիւսիսակէն սառած այտերն :

Անժէլ շնչառապառ կանգ կ'առնու . . . :

Բարի Նօթըր-Տամ-տիւ-Մօն, կ'ըսէ, գթա՛յ յիս . . . :

Շրթանց վրայ կը մեռնի խօսքն, եւ դողդոջուն ու անկենդան կ'իյնայ սառուցեալ գետնին վրայ . . . :

Եւ ձիւնը կը տեղայ . . . միշտ կը տեղայ . . . :

Եւ ձայն մը որ ճամբուն կաղամախեաց մէջ կը սուլէր, եւ որք կարծես կամաքներ էին որք իրարու կը զարնէին իրենց չորացեալ ոսկրները, կը մրմնջէ հեռանալով :

Աւա՛ղ, ո՞ր կ'երթայ ձիւնը զոր հովն իւր սրաթեւ թռչններուն վրայ առած կը տանի : Ո՞ր պիտի իյնայ մահաշունչ հիւսիսակէն արտալածիկ դալկահար տերեւը :

Ո՞ր պիտի կանգ առնու այն ծառատունկը
զոր կը վարեն հեղեղին տղմուտ ջրերը մը-
ռնչմամբ . . . :

Ե .

Ֆռիձ՝ Օսուալտ հովտին դղեկին պա-
հապանը , լուսնալուսն պէս՝ դուրս կ'ենէ :
Նորա Սէզառ անուն չունն ուրախ զուարթ
առջեւէն կը վազէր , մերթ անհետ կ'ըլլար
եւ մերթ կուգար տիրոջ քովն որ կը խա-
խուսէր գինջը ձայնով ու շարժմամբ :

Անասունը մէկէն կանգ կ'առնու , ա-
կանջները կը տնկէ , եւ ընդհուպ ձիւնը
նորա ճարտար թաթերուն տակէն վեր վեր
կը ցառէ եւ մանրիկ անձրեւի պէս վար կը
թափի : Նորա աղիւղարմ կազկանձիւնները
գրաւեցին ուշադրութիւնը պահապանին՝
որ հասաւ անդր այն վայրկենին յորում ա-
նասունը կը ջանար իւր շնչովը ջեռուցունել
մարդկեղէն արարածի մը , մանկան մը ան-
կենդան մարմինը :

Ֆռիձ՝ առանց վայրկեան մը իսկ կոր-
սնցնելու , հէք աղջիկն իւր կորովի բազ-
կացը մէջ առնելով գլխակ տարաւ , այս թան-
կազին բռն Ուիլհէլմին կոմսուհւոյն , իւր
տիրուհւոյն գրկացը մէջ դնելու :

Դղեկին բարետիրտ տիրուհին յարա-
սուս փռձկեցաւ եւ փութով մանկան վը-
րայ թափեց իւր խանդակաթ խնամքները
զորս կին մը միայն կրնայ ի գործ դնել . կը
պառկեցնէ զայն մաքուր անկողնոյ մը մէջ
եւ նորա սառած ոտներն իւր ձեռաց մէջ
առած կ'ուզէ տաքցնել : Բայց ի դուր կը
ջանար սթափեցնել այն դարհուրելի թըմ-
րութենէն . կեանքն հրաժեշտ տուած էր
այս քնքոյշ ծաղկան , որուն գոգցես մահը
դպրուցած էր իւր շարադէտ մօտը :

Մէկէն կոմսուհին աղաղակ մ'արձակեց ,
սուկալի աղաղակ մը . . . : Կը ճղնջնար իւր
աղջիկը :

Եւ արդարեւ դուստրն՝ իւր գրկացը
մէջ կը գտնուէր , իւր ամենօրեայ երա՛ղն՝
ամենօրեայ տանջանքն էր . . . : Իւր աղջի-
կըն էր նա՝ զոր գնչունները գողցան երբե-
մըն : Իւր Անժէլը , մեր Անժէլն , Աչերը
մկնածդ տարար կը յառէին նորա դիմաց
վրայ , մանկան դիակին վրայ . կը շօշափէ ,
կ'որոնէ , եւ դողդոջուն ձեռքը վեր կ'առ-
նէ չապիկն որ վիզը կը ծածկէր . . . : Փոք-
րիկ ոսկեղէն խաչ մը կը բռնէ , եւ կը մա-
րի . . . : Կը վազեն . . . : Կ'սթափի : Աղ-
ջիկն , աղջիկն , կ'աղաղակէր , զայն իւր ո-
գեսալառ կրծոց վրայ սեղմելով եւ համ-
բոյրներով ծածկելով . վերջապէս կը գըտ-
նեմ գրեզ . . . : Ճանչէ՛՛ դիւ , մայրիկդ
եմ . . . : Բա՛ց աչերդ . . . : Այլ եւս չպի-
տի գատուիս ինչ : Աստուած իմ , կը տես-
նես վիշտս , խնայէ զաւկիս . . . : Ո՛հ , ոչ
չես ուզեր որ մեռնի նա , ո՛վ բարի սուրբ
կոյս , շես ուզեր :

Եւ արտասուօք կ'ողողէր Անժէլի դէմքն ,
որ վերջապէս կիսովին բացաւ իւր աչերն ու
հառաչէ մ'աւելի տկար ձայնով մը մրմնջեց .

— Շնորհակալ եմ . . . բարի տիկին , կը
մեռնիմ :

— Բայց ես չեմ ուզեր որ դու մեռնիս ,
որովհետեւ մայրդ եմ , մայրիկդ , լսէ՛ . . . :

— Մայրիկս , թողովեց տղան :

Եւ որովհետեւ խօսելու մեծ ու բուն
ձիգ մ'ըրած էր , գլուխը բարձին վրայ ին-
կաւ եւ թեթեւ շունչ մը յուսահատութե-
նէ յիմարացեալ հէք մօր շրթներն բերեց . . .
.

Սպիտակ աղաւնի մը եկաւ թառեցաւ
պատուհանին վրայ եւ սոխակի ձայնի նը-

ման քաղցրալուր ձայն մը սա խօսքերը լա-
ցաւ .

Աւա՛ղ , ո՞ր կ'երթայ ձիւնը զոր հովն
իւր սրաթեւ թռիչներուն վրայ առած կը
տանի : Ո՞ր պիտի իյնայ մահաշունչ հիւ-
սիւսակէն արտալածիկ դալկահար տերեւն :
Ո՞ր պիտի կանգ առնու այն ծառատունկ-
ը զոր կը վարեն հեղեղին տղմուտ ջրերը
մռնչմամբ . . . :

Զ .

Հետեւեալ առաւօտուն , կին մը որ
ուրուական մը , հրէշ մ'էր աւելի , գրկացը
մէջ բան մ'առած որ անկենդան էակի մը
ձեւն ունէր , վազելով անտառէն կ'անցնէր .
ոչինչ կը կասեցնէր զինքն իւր այդ ոգե-
պառ ընթացքին մէջ . ոչ , կոպիճներն՝ որք
իւր ոտները կը վիրաւորէին եւ ոչ կոճղերն
որք կը պատառէին իւր հանգերձները :

Նիհար ու դողդոջուն դիմօք այս կինն ,
այլանդակ ու ստակալի այս հրէշն որ հե-
րարձակ միշտ յառաջ կ'երթար ակնապիչ ,
Ուիլհէլմին կոմսուհին էր եւ այն բանն որ
անկենդան էակի մը ձեւն ունէր , իւր աղ-
ջիկն էր :

Տարօրինակ , յիմար գաղափար՝ մայրն
զգալով որ իւր աղջիկը պիտի մեռնէր եւ
ինքն եւս չպիտի կրնար ալ ապրիլ , ուղած
էր տեսնել ու իւր շրթունքներով համբու-
րել այն տեղին՝ ուրկէ Անժէլ գտնուեցաւ :
Կոմսուհին երբ հոն հասաւ , իւր վրայ ծը-
ռեցաւ , գետինն ինկաւ միշտ բազկացը մէջ
բռնելով , միշտ կրծոցը վրայ սեղմելով այն
թանկագին բռն որ անշարժ զանգուած
մ'էր . — Իւր աղջիկը միւս անգամ գտնելու
խնդութիւնն , եւ ապա զայն կորսնցնելու
վիշտը , վերջապէս այս ամեն յուզմունքնե-
րըն քայքայած էին նորա առողջութիւնն
ինչպէս նաեւ խանգարած միտքը . — ջային
ու խռովայոյզ կեանք մ'էր զոր կը վարէր
կոմսուհին Անժէլի վերադարձէն ի վեր . եւ
այդ խռովայոյզ կեանքերն արդէն կարճա-
տեւ կ'ըլլան :

Ուրեմն ամեն ինչ լմնցած էր միթէ՞ . Առ-
տուած հրաշք մը չը՞պիտի գործէր : Զը՞ պի-
տի թողուր մօրն որ անգամ մ'եւս համ-
բուրէր իւր զաւակն : Եւ չը՞ պիտի թողուր
որ զաւակն անգամ մը ժպտէր իւր մօր :

Այս սրտաճմիկ տեսարանը վրայ մը ու-
նէր . խոր խորշմներէ փորուած գէմբով
կին մը , զարհուրելի սիբիլայ (sibylle) մը ,
Տարկո թագուհին , ըստմնախուշ ցանկի մը
ետին պահուցած անմուռնչ ու տարբեր
զգացումներէ յուզեալ , հանդիսատես եղած
էր Անժէլի անկենդան մարմնոյն առջեւ
Ուիլհէլմին կոմսուհւոյն զգացած զայրագին
վշտին :

Վերջապէս կը գտնեմ զինքն . — Այս
եղաւ գնչու կնկան առաջին աղաղակն , երբ
տեսաւ զայն կիզած իւր հարազատ մօրը
քով , զնա՝ որ իւր գգուանքներէն խոյս
տուած էր . — եւ շարիմաց ծիծաղ մը պար-
զուեցաւ նորա տոգոյն շրթանց վրայ :

Արդէն իսկ ցանկապատէն ասդին ցատ-
քած , դէպի նա խոնարհած ու իւր ճանկ-
ներն երկնցուցած էր . . . : Յանկարծ կանգ
կ'առնու ոգեսալառ ու խռովայոյզ , փոփո-
խակի կը նայի մօրն ու որդւոյն . կը զգայ
յինքեան բան մը որ կ'անդառնալուծէր իւր
ամեն շարժումները , սրտին բարախել կու-
տար ու կը փոխէր իւր ամեն խորհուրդ-
ները . թշուառ կախարդը զինքը չէր ճա-
նաչէր :

Այս բան մը ըսածնիս երկնային լուսոյ

չողն էր որ եկաւ լուսաւորել իւր միտքն
յանկարծ :

Եւ թերեւս ան ալ օրուան մը , ժամուան
մը , վայրկենի մը համար , Տարկո , վայրու
մազերով թագուհին , բարոյն ու չարին
անգէտ գնչուն , այդ կամապաշտն , հիմա
ալ կնոջ մը զգացումները կը կրէր . հասկը-
ցաւ մօր մը զաւկին համար ճշմարիտ սէրն
եւ խոնարհեցաւ յաղթահար ու զինաթափ :

Ո՛հ , աւելին կայ . ծոցէն հեղուկով լի
սրուակ մը հանելով՝ քանի մը կաթիլ թա-
փեց գունաթափ շրթանց վրայ մանկան զոր
ինը տարիներ զաւակս կոչած էր եւ քանի
մը կաթիլ եւս շրթանց վրայ անոր՝ որուն
այնքան աղէտ բերած էր : Համարոյժ բա-
նասէն էր դա որուն գաղտնիքը կը վերա-
բերի միայն այս յաւիտեան թափառական-
ներուն :

Նոյնհետայն մայրն ու որդին սթափե-
լով , մոլեգնաբար իրարու գրկի կը նետ-
ուին :

Գնչուն , այս վագրը զոր այլ եւս առե-
լու իրաւունք չ'ունինք , երբ զայս տեսաւ ,
իր դժոխային աղիքները գալարեցան . յա-
ռաջ ցատքեց եւ աներեւութացաւ վազե-
լով :

Եւ ամեն անոնք որք նորա հերարձակ ,
անկապիչ ձեւերնիւն անցնիլն կը տեսնէին ,
կ'ըսէին .

Հէք յիմար , ո՞ր կ'երթայ :

Աւա՛ղ , ո՞ր կ'երթայ ձիւնը զոր հովն
իւր սրաթեւ թռիչներուն վրայ առած կը
տանի : Ո՞ր պիտի իյնայ մահաշունչ հիւ-
սիւսակէն արտալածիկ դալկահար տերեւն :
Ո՞ր պիտի կանգ առնու այն ծառատունկը
զոր կը վարեն հեղեղին տղմուտ ջրերն մը-
ռնչմամբ :

Թարգմ. Պ. ԹԵԼԼԱԼ

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

Նոյեմբ. 28 էն Դեկտեմբեր 4

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ֆրանսական Հանրապետութեան նորոն-
տիր նախագահը Պ. Դիւառի յանձնեց նոր
նախարարութիւնը կազմելու պաշտօնը :

Պ. Դիւառ (Մերակոյտի անդամ , նախ-
կին կառավարիչ Ալճերիայի , նախկին ե-
լեւմտից նախարար) , նախարարութիւնը
կազմեց հետեւեալ կերպով .

Պ. Դիւառ , նախարարապետ եւ նա-
խարար Ելեւմտից .

Պ. Ֆուռէնս , նախարար արտաքին գոր-
ծոց .

Պ. Ֆալիէս , դատական գործոց .

Պ. Սառիէն , ներքին գործոց .

Պ. Ֆէյ , հանրային կրթութեան :

Պ , ալ Մահի , ծովային գործոց .

Զօր . Լօժըոս , պատերազմական գոր-
ծոց .

Պ . Լուպէ , հանրօգուտ շինութեանց .

Պ . Տոդրէմ , վաճառականութեան եւ
ճարտարութեան :

Պ . Վիէյ , երկրագործութեան :

— Ֆրանսական տաքնապը պահ մը այն
աստիճան երկրիւղ պատճառեց որ շատ մը
օտարազգիք՝ նախընթաց շարժումն մէջ՝
մեկնեցան Փարիզի պանդոկներէն . թատ-

բոնք գրեթէ թափուր էին . եւ շատ մար-
դիկ գրամատուներէն իրենց դրամներն
ետ առին : Կառավարութեան ձեռք առած
գրուական բազմադիմի միջոցներէն մին ալ
սա եղաւ որ դատաւային հրամատարու-
թեան պաշտօն ունեցող ամեն զօրավարնե-
րուն որք ի Փարիզ կը գտնուէին՝ հրամա-
յեց իրենց տեղերն երթալ, եւ այս կեր-
պիւ Զօր . Պուլանժէ եւս հարկադրեցաւ
հեռանալ Փարիզէ :

—Համալուսեանք ազգու ջանք մ'ըրին հա-
մուշտու Զարն որ Հապէշներուն օգնէ ընդ-
դէմ Իտալիոյ եւ Անգլիոյ : Թէեւ Կարմիր
Մոլու մէջ Ռուսիոյ քաղաքական կարեւոր
շահեր ունենալուն յիշատեմէ թերութիւն է,
եւ ազդեցիկ կերպիւ պաշտպանուեր է,
բայց Զարն հաստատապէս որոշեր է որ
Ռուսիա պաշտօնապէս չխառնուի Հապէշաս-
տանի գործին : Բայց անպաշտօնապէս կամ
անհատապէս Ռուսիա չպիտի դադրի հա-
մալրանք տածելէ Հապէշներուն վրայ : Այ-
սու կը բացատրուի անշուշտ այն լուր թէ
Բեդերսպուրկի Կառավարութիւնը բացառ-
ութիւն խնդրեր է Հռոմի Կառավարու-
թեանէն՝ Հապէշաստանի վրայ զորք զրկուե-
լուն առթիւ : Ռուսիոյ տնտեսութիւնն իւր
վրայ չհրախրելու համար, Իտալիա թերե-
ւոյ մեղմէ Հապէշաստանի դէմ իւր վրէժ-
խնդրական գործողութիւնը :

—Վիէնայէ եւ Լոնտոնէ չաբաթ օրն
առնուած հեռագրեր կը յայտարարէին թէ
Ռուսիոյ սպառազինութեանց նկատմամբ
առնուած լուրեր չախազանցեալ են : Այս
յայտարարութիւնը անշուշտ ուսական ազ-
բիւրէ կը բխին, զի Բեդերսպուրկէ դեկտ.
3 թուով հետեւեալն հեռագրուած էր եւ-
րոպեան լրագրաց .

«Աւստրիոյ սահմանաց վրայ զօրաց համա-
խըմբումներ տեղի ունեցած են արգարեւ :
Բայց հին պատմութիւն մ'է այս, եւ եր-
բեք այս հախախտումներ եւրոպեան լրա-
գրաց ուսանց ցոյց տուած ընդարձակու-
թիւնը չեն ունեցած : Զօրաց վերջին շար-
ժումները Քիէվի զինուորական շրջանակին
մէջ միայն տեղի ունեցան » :

—Միացեալ Նահանգաց մէջ օրուան
խնդիրն է Նախագահ Պ . Քլիվլենտի ար-
տասութիւնը պատմագիրն առ Խորհրդարանն,
որով յոյժ ազդու եւ կարուկ լեզուաւ մը
կ'ըսէ թէ Ամերիկա այլ եւս պէտք չունի
պաշտպան-գրութեան : Մանր մանքերէ
առնուած մեծաքանակ հասոյթը, կառա-
վարական ամեն պիտոյից բաւելէ զատ, ա-
մեն տարի ահագին գումարներ կը զիջեն
Փանծարանին մէջ, որք գոյութեան եւ շը-
ռայութեան թելադիր կը լինին Կառավա-
րութեան եւ կուսակցութեանց, մինչ տըն-
տեսագիտութեան տարրական պահանջում
մ'է՝ մանքերը չափաւորելով՝ ժողովրդէն
առնուած անուղղակի տուրքը թեթեւեղել,
եւ այսպէս թողուլ որ Տէրութեան Փան-
ծարանին մէջ զիջեալ աւելուդ հասոյթը
ժողովրդեան ձեռաց մէջ գործածուին ի
մեծագոյն բարդաւաճում երկրին : Այս ող-
ջամիտ վարդապետութեան դէմ կը կանգ-
նին Հանրապետականք, եւ մինչեւ իսկ Պ .
Քլիվլենտի ժողովրդական կուսակցութեան
նշանակաւ . Պ . Քլիվլենտ արիւթաբ կը
ստանձնէ մեծ սկզբունքի մը քառադուլու-
նը : Բայց կը մնայ տեսնել թէ ամերիկան
ազգին մեծամասնութիւնը պիտի հաւանի
թողուլ պաշտպան-գրութիւնն, որուն կը
վերադրուի Միացեալ Նահանգաց տնտեսա-
կան զարմանալի բարդաւաճումը :

—Տրապիզոնի դաւաճէն ելած մեղրէն մաս

մը զրկուեր է Անգլիոյ Դեղագործական Ըն-
կերութեան ի քննութիւն, եւ տարալուծ-
ուելով, ստուգուեր է թէ Կարգէթ թոյն
կը պարունակէ, որ կը գործէ ընչական
գործարանաց վրայ, զորս անդամաւորե-
լով, մահ կրնայ պատճառել : Քսենոփոն իւր
Տասն Հազար Յունաց Հայաստանէն անց-
նիլը նկարագրելով, կը պատմէր թէ Տրա-
պիզոնի կողմերէն անցնող Յոյն զինուորք
մեղր կերան զոր առատօրէն կը գտնէին
հոն . քիչ ուսողները գինովի պէս եղան,
իսկ շատ ուսողները խելագարելու աստի-
ճան իրենք զիրենք կորսուին : Ասոնցմէ շա-
տեր մահամերձ լինելու չափ հիւանդացան .
բայց օր մ'անգգայ մնալէն յետոյ աղէկցան,
թէեւ հիւանդոտ դէմք մ'ունէին : Քսենո-
փոնի այս աստիճանները տեղւոյն վրայ
ստուգող եւրոպացի զինականք «Տրապի-
զոնի մեղրին» մէջ գտած են դառն հոտ
մը եւ արեւոյնցիչ հանգամանք մը : 1885
ին Ռոտտուօ քանի մշակներ թունաւորե-
ցան մեղր ուտելով : Տեղացիք ենթադրեցին
թէ մեղրամանին մէջ օձ մտած էր : Բայց
այժմ կ'ստուգուի թէ այս թունաւոր մեղ-
րն արտադրող մեղրներ իրենց գտնուած
դաւառին մէջ թունաւոր տուրկերէ ծծած
են մեղրահիւթը :

Ն Ե Ր Ք Ի Ն

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ
Զմիւռնացի ազգային երեսելի բարերար
Վսեմ . Յովհաննէս Էֆէնտի Սոյաթաբեան
Իււլյի երկրորդ աստիճանն բարձրացած է :

—Վեհ . Սուլթանը բարեհաճած է եր-
րորդ կարգի Մէճլիսիյէ պատուաւորան շը-
նորէի Մեծ . Սարգիս Էֆէնտի Թօփհանէ-
լեանի :

Սարգիս Էֆէնտի Թօփհանէլեան Օսմ .
Կայս . Պանքայի ամենէն վաղեմի պաշտօն-
եայն է, այդ գրամատու հաստատութե-
նէն ի վեր իւր բարեք եւ հաւատարմ
ժառանգութիւններով լիովին արժանացած
կայսերական այս գնահատման զոր գոհու-
թեամբ կը ծանուցանենք :

—Սէլանիկի զօրաբաժին սպայակոյտի Միր-
լիվա Էմին փաշա Սեբաստիոյ եւ նոյն ըս-
պայակոյտի Միրլիվա Մուսթաֆա Սաֆվէզ-
փաշա եւս Վանայ պահեստի զօրաց հրա-
մանատար կարգուած են : Առժամայ զա-
նազան զօրածինք ջնջուած լինելով, Սպա-
րապետի Դուռն ուրիշ պաշտօններու պիտի
կոչէ նոցա բարձրագոյն սպայներն :

—Բէշլաքի օսմանեան ընդհանուր հիւ-
պատու անուանեցաւ Բերայի պատժական
ատենին անդամ Վահրամ պէյ Տատեան :

—Հաֆէթաբ կ'իմանայ թէ Տիգրանակեր-
տի վերաքննիչ տեսնին պատժական ճիւղի
նախագահ Ֆէթհի պէյ պաշտօնանկ եղած
է եւ նմա յաջորդած է ուրիշ մը :

—Վեհ . Սուլթանին հրամանաւ 98 տար.
ւոյն մէջ զինուորագրեալ հետեւակներն եւ
98 տարւոյ հեծեալ զօրքերն անմիջապէս
պիտի արձակուին եւ իրենց հայրենիքները
պիտի զրկուին ստանալով իրենց առկա
ամաւթընդներն :

—Դատական նախարարութիւնը Դա-
տական բարենորոգմանց Յանձնաժողովոյն
յանձնած է Տիգրանակերտի վերաքննիչ
ատենի պատժական ճիւղին նախագահ
Ֆէթհի պէյի դէմ եղած բողբադերն :
Յանձնաժողովն եւս ձեռնարկած է հարկ
եղած քննութեանց :

—Կայս . Կառավարութեան որոշմամբ
Թուրքիա բնակող բոլոր օտար բժիշկք եւ
դեղագործք պարտին երեք ամսուան միջո-
ցին Կ . Պոլիս գալ քննութիւն անցունելու
կայս . բժշկական վարժարանի ժողովին առ-
ջեւ եւ վիսյագիր ստանալու համար, որով
կարենան ի գործ դնել իրենց արուեստն :
Այս տնօրինութիւն՝ որ հաղորդուած էր
դեսպանատանց՝ ինչ ինչ առարկութեանց
առիթ տուած լինելով, յանձնարարուեր է
Մարքօ փաշայի՝ գործնական կերպարան մը
տալ խնդրոյն եւ համաձայնութիւն գոյա-
ցնել օտար դեսպանատանց հետ :

—Հանրօգուտ շինութեանց նախարա-
րութեան երկրաչափ Գէորգ Էֆէնտի Աս-
լան, որ Իզմիր գացած էր Կէտիզի գետա-
բերանի մասին կատարուած աշխատութիւն-
ները քննելու, մայրաքաղաքս վերադար-
ձաւ իւր քննութեանց տեղեկագիրը պատ-
տելէ վերջ :

—1889 ին ի Բարիզ բացուելիք Սրուես-
տահանդիսի անօրէն Պ . Ժօրժ Պերժէ Նա-
մակ մ'ուղղելով Առեւտրական Սենեկին՝
փափագ յայտնած էր որ Սրուեստահանդի-
սին մէջ օսմանեան արտադրութիւնները
ներկայացնող ճիւղ մը կազմակերպուի ի Կ .
Պոլիս, ձեռամբ Առեւտր . Սենեկին :

Առեւտր . Սենեկի ժողովն իւր դեկտ .
8ի (Ն . Տ .) նստին մէջ ուղարկութեան
առնելով Պ . Պերժէի այս նամակն, իւր մէ-
ջէն յանձնաժողով մը կազմեց հետեւեալ
անդամներէն, Սրիտակէս Էֆէնտի Ազար-
եան, նախագահ Սենեկին, Սիւլէյման Սիւ-
պայի Էֆէնտի, դեր-նախագահ, Եօրիկ
Քաղանօփա Էֆէնտի, Մանուկեան Սենեքե-
րիմ Էֆէնտի, Էլ Ալիզատէ հաճի Սհմէտ
Էֆէնտի եւ Պ . Սիւլէյման Միւլ : Այս յանձ-
նաժողով պաշտօն ունի Օսմ . կայս . Պան-
քայի տնօրէն Պ . Էմիլ Տըվլյի հետ խոր-
հրդակցելով պէտք եղածը տնօրինել :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Հինգշաբթի օրն Ամենայն Հայոց Հայ-
րապետ Վեհ . Տ . Տ . Մակար Ս . Կաթողի-
կոսի անուան տոնախմբութիւնը լինելով,
Ամեն . Տ . Յարութիւն Ս . Պատրիարք Հայ-
րը շնորհաւորական հեռագիր մ'ուղղելով ի
Ս . Էջմիածին, երկար կեանք մաղթեց Ն .
Վեհափառութեան :

—Կրօնական ժողովոյ կողմէ կարգեալ
եկեղեցական պատգամաւորութիւն մի չօ-
րեքշաբթի առաւօտ Գուրուէշէմէ Մեծ-Ե-
պարգոս Քեամիլ փաշայի ապարանքն եր-
թալով ներկայացաւ Ն . Բարձրութեան եւ
պարզեց ազգային վիճակն : Ն . Բարձրու-
թիւն սիրալիր կերպիւ ընդունելով զպատ-
գամաւորութիւնն յուսողրեց թէ Պատրի-
արքական խնդիրն ընդհուպ պիտի կար-
գադրուի եւ խոստացաւ Նախարարաց
Խորհրդոյ նոյն առուր նստին ներկայել
զայն :

—Այս կիրակէ օր Զմիւռնիոյ եկեղեցւոյն
մէջ աղմկալից ցոյցեր եղեր են տեղւոյն ա-
ռաջնորդ Մեքիսեղեկ եպիսկոպոսի հրա-
ժարումը պահանջելու համար :

Այս ցոյցերուն առթիւ տեղւոյն Ս . Ա-
ռաջնորդն հեռագիր մ'ուղղելով Ամեն . Ս .
Պատրիարք Հօր կը հաստատէր այս դէպքն
յարելով թէ առանց ծանր հետեւանք մ'ու-
նենալու բարեկարգութիւնը վերահաստատ-
ուեր է :

—Զմիւռնիոյ առաջնորդ Գեր . Մելքի-

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱԲԱՐԵՆԻ ՀԵՏԵԻԵԱԼ ՀՈՏԱԻՏ ՆԻԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար Ambrosial cream, օճառուտ քրեճ՝ ամուլ-
ուղ մարդու համար. Crème de Fraises մորթի կակուզցնելու համար. Poudre de Cypris
զովացնելու եւ ճերմկցնելու համար մորթի. Stilboideֆայլ տալու համար մազերուն եւ մորու-
քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat
de Cochlearia ակուայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Թաշկինակի հա-
մար հոտաւէտ նիւթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Ma-
rie Christine. Imperial Russe. 977 15—29

սեղեկ եպիսկոպոս չորեքշաբթի իրիկուն
ուշ ժամանակ հեռագիր մ'ուղղելով առ
Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ կը յայտնէր
թէ հրաժարած է Զմիւնիոյ առաջնորդու-
թեան պաշտօնէն եւ թէ իւր հրաժարագի-
րը մատուցած է տեղւոյն գաւառական
ընդհանուր ժողովոյ Առնենապետին։
Այս առթիւ Զմիւնիայէն հետեւեալմաս-
նաւոր հեռագիրն ուղղուած է առ Արեւելի
Իզմիր, 14 դեկտ. Երեւոյ
«Մեքիսեղեկ Սրբազան իւր հրաժարա-
կանը առաւ կոստակիրն։ Մանրամասնու-
թիւնը յայտնի չեն»։
—Կը լսենք թէ եկեղեցական հարց կողմէ
հանրագիր մը ստորագրուելու վրայ է իզմի-
առաջնորդ Մեքիսեղեկ եպիսկոպոսի հա-
կազգային ընթացքին դէմ։
—Վենետիկի Միսիսարեանց Աբրահայր
Գեր. Իգնատիոս Արքեպիսկոպոս շարժու-
մենեցաւ մայրաքաղաքէս ի Պրինտիվի ուս-
կից ուղղակի Հոմ պիտի երթայ։
—Վանայ Պատրիարքական Գեր. Փո-
խանորդը ծանուցած էր ի Պատրիարքարան
թէ տեղւոյն գիւղաբնակ ազգայինը թըշ-
ուառ կայսրութեան մէջ կը գտնուին յերե-
սաց սովու եւ երաշուտեան եւ Կրօնա-
կան ժողովն որոշած էր գրեւ գաւառին
վանորէից որպէս զի նպատակն աղքատ ժո-
ղովրդեան։ Կրօնական ժողովն, ի մէջ այ-
լոց, Աղթամարայ Ամեն. Ս. Աթոռիկոսի
ուշադրութիւնն հրաւիրած է այդ գիւղա-
բնակ ազգայնոց թշուառ վիճակին վրայ։
—Կը լսենք թէ Ազն. Տիկին Գայեանէ
Մատակեան հրաժարած է Բերայի իգական
Արուեստանոցի Տեսչութեան պաշտօնէն։



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԻՅՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԹՅՈՒՆ Ե Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Ընդարձակ տեստեր գաւառաց հետ
Զինէ եւ ճապայե ուղղակի բեռցած
Գերբնաիր եւ ամեն նաշակի յարմար բէշեր
ԳՆԵՐ ԶԱՓԱՌՈՐ ԵՒ ՈՐՈՇԵՍԼ

Փորձը ամեն գովաստէ լաւագոյն պիտի
հաստատէ հինգ տարիէ ի վեր սոյն վաճա-
ռատան ըրած զոհողութիւնքն յաճախորդները
գոհացնելու համար։

Պահճէ Գարու ճէլալ պէյ խանի
Գրան կից թիւ 10

1000 58—78

ՓԱՌԱԿԱԶՄ ՕՐԱՅՈՅՑՔ

Կ'ուզէ՞ք ունենալ Նոր Տարւոյն համա-
ռօտ եւ ընդարձակ Օրացոյցն, պարզ կամ
սակէզօծ, թաւչեայ կամ մետաքսեայ, նախ-
շուն, քնքուշ ու փառաւոր։
Կաղանդի համար կաշեկազմ, սակէզօծ
եւ զարդարուն ազօթագիրքեր։ Պատի Օ
րացոյցներ մեծագիր կամ մանրիկ։
Դիմեցէք Զարմարճըլար-Եօզ ուշ, թիւ 51
Վ. Արպանեան եւ Եղբորդ գրատունը։

Գաւառական յանձնարարութիւնը խը-
նամով կը կատարուին։

Վասն Արտօնատեաւն
Տնօրէն-Պատասխանատու
Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼԻ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏԵՄՍ՝ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇ ԵՐԵՎԱՆԵՐՈՒ ՄԼՁ. ՆՈՐՈԳԻՂ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
կուտայ։ Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը եւ աճումը։
Գլխու թեփը շուտ մը անկրկնելի կ'ընէ։ Իր անուշ
հոտը առատ է ու հեշտալի։
«Մէկ շէշը կը բաւէ։» Այդ փորձը ունեցան
ամենքը որոնցմիտք ունեւ մազեր իրենց բնական գոյ-
նին դարձան, եւ ճաշատ տեղերը մազով ծածկուեցան։
«Երեկ չէ, եւ ամենէն ղեան մը չընէր։ Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ եւ բոլոր
կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շէշ մը ստացիր ԲԵՆԷՆՍ՝ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ համա-
նախաժողովն ինքն ինքնուրոյն։ (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)
Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row).
Նոյնպէս Բարիդ ու Նիւ Եօրք։ Կը վաճառուի ամեն սափրիչներու, անոյշ իւզա-
գործներու եւ անգլիացի դեղագործներու քով։
Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբորդ բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էմմիլիա Քարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէր Գալալըրմ. եւ Իզի-
տօր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց։



ՀԵՐՄԵՆԵԿԸՆ ԵՒ ԿԵՓՈՒՆՔ

ԳԵՂԵՑԿԵՑՈՒՆՈՂ ՄԼՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ
ԵՒ ԿԵՓՈՒՆՔ, ՄԻՇՏ ԹԱՐՄ՝

Ընգամուան մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ եւ բազմաթիւ փոշի-
ներէ։ Առաջին անգամ գործածելովն ալ, որ քանի
մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ
երեսը, վիզը, թեւերը եւ ձեռքները պիտի առ-
նուն անոյշ փափկութիւն մը եւ մարմարիտի
փայլ, հանգերձ շուշանի եւ վարդի գունով եւ
բուրմամբ։ Սապոնի գրգռիչ յատկութիւնները
կը հանդարտեցունէ։ Ընհետ կ'ընէ մորթի սևութը, երեսի եւ ձեռքի ցանկեր, արիւշ-
րութը, եւ ուրիշ ամեն բրտութիւն եւ բծաւորութիւն։ Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է։
Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս
Բարիդ ու Նիւ Եօրք։ Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւզագործներու եւ
անգլիացի դեղագործներու քով։
Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբորդ-բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էմմիլիա Քարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէր Գալալըրմ. եւ Իզի-
տօր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց։



ԿԵՐԷՔ, ԱՃՈՒՄՆ Ե ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒՆ

ՄԼԼԵՐՈՂ

ՄԼՁԵՐՈՒ ՄԼԿ ՀԵՏԻԿ ՆՈՐՈԳԻՂ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմակած կամ գունաթափ
մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ։
Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շէշերու մէջ։
Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս
Բարիդ ու Նիւ Եօրք։
Կը գտնուի Ն. եւ Ժ. Գանգիւր եղբորդ բրիտանական դեղարանը, Բերա, Մեծ
փողոց. Էմմիլիա Քարուան. Անգլիական միջերանոց, Նիւքսէր Գալալըրմ. եւ Ի-
զիտօր Լագանտէլա 455, Բերա Մեծ փողոց։

